

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ  
ՀԻՂՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Իրանի Իսլամական  
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,  
ցանկանալով օգտագործել Մեդրի եւ Ղարաչիլար վայրերում Արաքս գետի  
հիդրոներուժը,  
հաշվի առնելով Կողմերի միջեւ առկա բարիդրացիական փոխհարաբերությունները,  
առաջնորդվելով հավասարության, միմյանց ներքին գործերին չմիջամտելու  
սկզբունքի հիման վրա տնտեսական եւ տեխնիկական համագործակցության ամրապնդման եւ  
զարգացման, ինչպես նաեւ միմյանց շահերը փոխադարձ հարգելու ձգտումով,

համաձայնեցին հետեւյալ մասին.

### ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության  
համապատասխան կազմակերպությունների միջոցով կհամագործակցեն Արաքս գետի վրա  
(Մեդրի եւ Ղարաչիլար) հեղրոէլեկտրակայանների կառուցման եւ շահագործման  
բնագավառում: Կողմերը պայմանավորվում են ամրագրել Արաքս գետի հիդրոէներգետիկ  
ներուժն օգտագործելու երկու պետությունների իրավունքը միջազգային պայմանագրերի  
չրջանակներում գործող միջազգային կազմակերպություններում եւ անհրաժեշտության  
դեպքում պաշտպանել այդ իրավունքը:

### ՀՈՂՎԱԾ 2

Մեդրի եւ Ղարաչիլար հեղրոէլեկտրակայանների կառուցումը կսկսվի 2007  
թվականին եւ կավարտվի վեց տարվա ընթացքում:

### ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը կֆինանսավորեն Մեդրի եւ Ղարաչիլար հեղրոէլեկտրակայանների  
նախագծումը, կառուցումը եւ սարքավորումներով ապահովումը՝ յուրաքանչյուրը իր  
տարածքում տեղակայված հիդրոէլեկտրակայանի (Հայաստանի Հանրապետությունում  
Մեդրիի եւ Իրանի Իսլամական Հանրապետությունում Ղարաչիլարի) ծախսերը հոգալու  
միջոցով:

### ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը կսահմանագծեն համատեղ ուսումնասիրության եւ շինարարական գոտին՝  
Արաքս գետի հիդրոէլեկտրակայանների եւ դրանց առնչվող շինությունների  
ուսումնասիրություններն ու կառուցումը ավարտելու նպատակով, եւ կապահովեն այդ  
գոտու անվտանգությունը շինարարական աշխատանքների իրականացման եւ շահագործման  
ընթացքում: Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության  
սահմանով երկու երկրների քաղաքացիների երթեւեկության եւ վերոնշյալ տարածք  
շինանյութի եւ սարքավորումների ներմուծման ձեւերը կսահմանվեն առանձին  
կանոնակարգով, որը երկու ամսվա ընթացքում կստորագրեն երկու երկրների  
պաշտոնյաները՝ վերոնշյալ ուսումնասիրության եւ շինարարության գոտում Հայաստանի  
Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ սահմանային  
երթեւեկությունը դյուրացնելու համար:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 5

Յուրաքանչյուր Կողմ ինքնուրույն կկատարի իր ընթացիկ աշխատանքները, այդ թվում՝ շինությունների, սարքավորումների եւ ամբարտակների եւ հիդրոկայանների շահագործման, պահպանման եւ վերանորոգման աշխատանքները եւ կիսուսափի ցանկացած քայլից, որը կվսասի էլեկտրակայաններին եւ դրանց բնականոն գործունեությանը: Այն դեպքերում, երբ Կողմերից որեւէ մեկի համար անհրաժեշտություն կառաջանա ստուգելու կամ վերանորոգելու մյուս Կողմի տարածքում գտնվող իր շինությունները, Կողմերը կփոխգործակցեն համապատասխան ներկայացուցիչների՝ իրենց տարածք անարգել մուտքն ու ելքը ապահովելու հարցում:

Յուրաքանչյուր Կողմ կհոգա իրեն պատկանող շինությունների վերանորոգման, պահպանման եւ շահագործման հետ կապված բոլոր ծախսերը:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 6

Կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ միմյանց հետ կհամագործակցեն ամբարտակների, թունելների, էլեկտրակայանների եւ տեխնիկայի ընթացիկ եւ հիմնական վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հարցերում եւ կմատուցեն փոխադարձ ծառայություններ այդ պայմանավորվածությունների համաձայն:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 7

Կողմերը կարող են նախապես ձեռք բերված համաձայնությամբ կատարել Ղարաչիլարի եւ Մեդրիի էլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայի փոխանակում:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 8

Յուրաքանչյուր Կողմ, ըստ նախնական պայմանավորվածության, մյուս Կողմին կփոխհատուցի Մեդրիի եւ Ղարաչիլարի հիդրոէլեկտրակայանների կառուցման արդյունքում հողատարածքների եւ շինությունների ջրասուզման հետեւանքով իր պատճառած վնասները: Կողմերից որեւէ մեկի կողմից մյուս Կողմի տարածքում շինությունների (ամբարտակների) կառուցումը մյուս Կողմի համար սեփականության որեւէ իրավունք չի առաջացնի կամ չի խախտի Կողմերի տարածքային ամբողջականությունը:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 9

Էլեկտրակայանների կառուցումը դյուրացնելու նպատակով Կողմերը հայտնեցին իրենց մտադրությունը՝ օգտագործելու երկու երկրների ֆինանսական, տեխնիկական, ճարտարագիտական եւ շինարարական ներուժը, ինչպես նաեւ շինանյութերի եւ սարքավորումների ձեռքբերման հարցում իրենց կարողությունները՝ երկու երկրներում գործող կանոնների եւ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության միջեւ փոխադարձ պայմանավորվածության համաձայն:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 10

Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանների եւ ամբարտակների կառուցումը որեւէ փոփոխություն չի առաջացնի երկու երկրների սահմանագծերում, եւ գոյություն ունեցող սահմանագիծը ամբարտակի կառուցումից եւ ջրամբարի ստեղծումից հետո կսահմանագծի ջրամբարի մակերեւույթի վրայով՝ երկու երկրների միջեւ ճանաչված սահմանով:

## ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 11

Կողմերը չպետք է օգտագործեն ջուրը այլ նպատակներով, քան սահմանված է ծրագրով: Կողմերը համաձայնում են, որ պետք է կանխեն ցանկացած գործողություն, որը կարող է հանգեցնել վնասակար արտանետումների միջոցով Արաքս գետի, ամբարտակների եւ շրջակա միջավայրի աղտոտմանը: Կողմերը նաեւ համաձայնում են, որ կուսումնասիրեն բոլոր բնապահպանական չափանիշները, եւ Կողմերից մեկի կողմից ամբարտակի եւ շրջակա միջավայրի աղտոտման դեպքում այդ Կողմը կստանձնի աղտոտումը վերացնելու եւ պատճառած վնասները հատուցելու պատասխանատվությունը:

## ՅՈՒՂԱԾ 12

Կողմերը սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ իրականացման ընթացքում ծագած տարաձայնությունները (եթե այդպիսիք լինեն) կլուծեն խորհրդակցությունների եւ դիվանագիտական բանակցությունների միջոցով:

## ՅՈՒՂԱԾ 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից եւ ուժի մեջ կմնա մինչեւ դրա ամբողջական կատարումը:

Կատարված է Մեդրի քաղաքում, 2007թ. մարտի 19-ին, որը համապատասխանում է իրանական օրացույցի 1385թ. Էսֆանդի 28-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն եւ անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

## AGREEMENT

Between the Government of the Republic of Armenia and the Government of the Islamic Republic of Iran on Cooperation in Construction and Operation of Run-of-River Power Plants on Araks River

The Government of the Republic of Armenia and the Government of the Islamic Republic of Iran, hereinafter called "the Parties";

Desiring to utilize the hydropower potential of Araks River at Megri and Ghara chilar sites,

Taking into consideration the existing good-neighbor relations between the Parties,

Followed by the mutual intent for the improvement and development of economic and technical cooperation on the basis of equality, non-interference in each other's internal affairs, as well as mutual respect of benefits

Have agreed as follows:

### Article 1

The Parties shall through the relevant organizations in the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, cooperate on the construction and operation of the Run-of-River Power Plants (Megri and Ghara chilar) on Araks River. The Parties understand and agree to register the rights of both states to utilize hydroelectric energy potential of Araks River in international organizations within the framework of international treaties

and to defend such a right should it needed to arise.

#### Article 2

The construction of Megri and Ghara chilar Run-of-River Power Plants shall be started in 2007 and completed within a period of 6 years.

#### Article 3

The Parties shall finance design, construction and equipment of Megri and Ghara chilar Power Plants in such a way that each Party pay the costs of the Power Plant located on its own territory (Megri on the territory of the Republic of Armenia and Ghara chilar on the territory of the Islamic Republic of Iran).

#### Article 4

The Parties shall demarcate a joint study and construction zone in order to complete the studies and construction of the Araks Run-of-River Power Plants as well as the related installations and to provide its security during construction and operation. The traffic of the persons of the two countries across the borders of the Republic of Armenia and the Islamic Republic of Iran and the forms of entry of materials and equipments into the aforesaid zone shall be subject to the Regulations to be signed by officials of both countries within 2 months (since the date of agreement) in order to facilitate the borders between Iran and Armenia at the foregoing zone of the Araks Run-of-River Power Plants.

#### Article 5

Each Party shall independently carry out its own routine activities including the operation, maintenance and repairs of facilities, equipment, reservoirs of the diversion dams and the power plants and shall avoid any action resulting in damaging the Power plant installations and their normal functioning. In case of requiring any inspection or repair of installations located on the territory of the other Party, the Parties shall perform mutual collaborations for the unhampered ingress and egress of their representatives. Each Party shall bear any and all costs of the repair, maintenance and operation of his own facilities.

#### Article 6

The Parties will collaborate with each other according to mutual agreement in order to carry out routine and major repairs of the related dams, tunnels, power plants and machinery and provide mutual services for each other according to this agreement.

#### Article 7

The Parties may exchange electrical energy produced by Megri and Ghara chilar Power Plants subject to a prior agreement.

#### Article 8

Each Party, based on a prior agreement will compensate the other Party

for any loss incurred by the latter due to the flooding of his lands and facilities as a consequence of construction of Megri or Ghara chilar Power Plant. The construction of the facilities (diversion dams) by either Party in the territory of the other Party shall not create the latter any right of ownership or impair the territorial integrity of its own.

#### Article 9

To facilitate the construction of the Power Plants, the Parties have declared their intention to use the financial, technical, engineering and construction potential of both countries, as well as each other possibilities in obtaining material and equipment according to the regulation applicable in both countries and mutual agreement between the Ministry of Energy of the Republic of Armenia and the Islamic Republic of Iran.

#### Article 10

The construction of the dams and the run-of-river power plants on the Araks River shall cause no change in the border lines between the two countries, and the existing border line shall be marked on the reservoir water surface to form the recognized border between the both countries after construction of the dam and creation of water reservoir.

#### Article 11

The Parties hereto shall not be entitled to abstract water for purposes other than defined in this project. They agree to prevent any action resulting in the pollution of the Araks River, reservoir of the diversion dams and environment by inflaming contaminated waste water. They also agree to observe all environmental protection criteria and, in case of contamination of the reservoir and environment by either Party, the latter will take the responsibility to remove the pollution and to indemnify for the losses so inflicted.

#### Article 12

The Parties shall settle the disputes (if any) arising from the interpretation or execution of this Agreement, through consultations and diplomatic negotiations.

#### Article 13

The present Agreement shall enter into force on the date of receipt of the last notification through diplomatic channels on fulfillment of relevant procedures required by national legislation of the Parties and will remain in force until its complete enforcement.

Signed in ----- on ---- March, 2007, corresponding to ..... Esfand 1385, in two original copies each in Armenian, Persian and English languages, all texts being equally authentic. Should any disagreement arise in the interpretation of the provisions of the Agreement, the English text shall prevail.

For the Government of the      For the Government of the

Republic of Armenia

Islamic Republic of Iran

Armen Movsisyan  
(Minister of Energy)

Parviz Fattah  
(Minister of Energy)